

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ

№2 (19) 2013

Гуманитарные науки

ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԱԶԵՎԻ ԲՈՒԼԻՄԻԿ ԵՎ ԱՆՈՐԵՔՄԻԿ
ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՅՆՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ

Հ.Լ. ՇԱՀԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավագիտության
ինստիտուտ*

Քսաներորդ դարի երկրորդ կեսին ֆեմինիստական շարժումների պորթլուծումների և կանացի ամսագրային մշակույթի ձևավորման հետ զուգահեռ արմատապես վերափոխվեց կնոջ սոցիալական դերի ու դիրքի ընդունված մոդելը: Արևմուտքում նախկինում գուտ օջախը պահպանողի և սերունդը շարունակողի դերը ստանձնող կնոջը այժմ առաջարկվեց մեկ այլ դեր, որը ենթադրում էր ակտիվ սոցիալական գործունեություն կյանքի բոլոր ասպարեզներում, որոնք ներառում էին նույնիսկ գործարարությունն ու քաղաքականությունը: Իհարկե, կնոջ իդեալների կտրուկ փոփոխությունը հանգեցրեց մի շարք հոգեբանական խնդիրների առաջացմանը, որոնցից մեկը՝ սննդային վարքաձևի խանգարումների անվան տակ թաքնվելով մինչև օրս իսկ է հազարավոր կանանց և աղջիկների կյանքը և դատվում է համար առաջին կանացի սոցիալ-հոգեբանածին համաճարակների շարքին: Խնդիրը սերում էր կնոջ սոցիալական դերի փոփոխությանը զուգահեռ նրա արտաքինը փոփոխության ենթարկելու անհրաժեշտությունից: Կնոջն առաջարկվեց մեկ այլ արտաքին իդեալ, որը ենթադրում էր հյուժվածության աստիճանի բարակիրանություն: Այսպես, 1980-ական թվականներին նորաձևության կողմից թելադրված և կուլտիվացված «դեռահաս մարմնի» պաշտամունքը դարձավ մասսայական հիպոթեզիա և այսօր ամենուր կարելի է հանդիպել կանանց և աղջիկների, որոնք տառապում են ավելորդ քաշից, կամ երկարաժամկետ սովի հետևանքով ի հայտ եկած հյուժվածությունից: Զանգվածային լրատվամիջոցները բազմահազար ամսագրերն ու հեռուստատեսությունը, ամենուր ջանք չեն խնայում է՛լ ավելի խորացնելու համար ստեղծված «ոսկրամարմինների կուլտը», ինչը լուրջ հոգեբանական ճնշում է գործադրում կանանց և աղջիկների վրա՝ ստիպելով դիմել ծայրահեղ միջոցների տվյալ սոցիալ-մշակույթային

կարծրատիպին համապատասխանելու համար: Որպես ստեղծված իրարանցման արդյունք՝ հազարավոր կանայք և աղջիկներ ամբողջ աշխարհում ձեռք են բերում սննդային վարքաձևի բուլիմիկ և անորեքսիկ խանգարումներ, որոնք այսօր, ըստ պաշտոնական տվյալների, դասվում են հոգեկան խանգարումների թվին [1]:

Միանշանակ պարզ է, որ տվյալ սննդային վարքաձևի խանգարումները առաջանում են նախևառաջ սոցիալ-հոգեբանական ազդեցությունների ներքո ի հայտ եկած խեղաթյուրված դիրքորոշումների ակունքից, ինչի հետևանքով էլ առաջանում են այն սննդային վարքաձևի կարծրատիպերը, որոնք վերջիվերջո հասցնում են նախկինում առողջ անհատին դեպի բուլիմիկ և անորեքսիկ խանգարումներ: Նպատակ ունենալով ուսումնասիրել այն սոցիալ-հոգեբանական ազդեցությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ նշված վարքաձևերի հետագա զարգացման և դրսևորումների համար, նախևառաջ նշենք, որ վերջինները սերում են ինչպես անհատի առաջնային սոցիալական խմբում գործող սննդի ընդունմանը և արտաքին տեսքին վերաբերվող կարծրատիպերից, այնպես էլ երկրորդական սոցիալական խմբերում գործող չափանիշներից ու զանգվածային լրատվամիջոցների ազդեցությունից:

Աշխատանքի կադապարում մեր նպատակն է ուսումնասիրել այն խեղաթյուրված դիրքորոշումները, որոնք պոտենցիալ հիմք են հանդիսանում նշված սննդային վարքաձևերի հետագա զարգացման համար:

Ինչպես նշում են մի շարք հեղինակներ, արդի հասարակությունում սովորող քաշի տեր մարդը ենթարկվում է սոցիալական դիսկրիմինացիայի [2]: Մեր օրերում նա սոցիումի կողմից գնահատվում է որպես «թուլական», «բթամիտ» և «թերաբժեք»: Նման վերաբերմունքի գոհ են դառնում մասնավորապես կանայք [3]: Այս ամենի արդյունքում էլ առաջանում են այն դիսմորֆաֆորիկ երևույթները, որոնք բուլիմիկ և անորեքսիկ խանգարումների առաջացման հիմք են հանդիսանում [4]:

Տվյալ խանգարումների առաջացման համար կարևորագույն դեր ունեն սոցիալ-մշակույթային ազդեցությունները, որոնք թելադրում են կնոջը որոշակի արտաքին կարծրատիպեր՝ կապված մարմնի քաշի և ձևի հետ:

Նյարդային բուլիմիայի և անորեքսիայի առաջացման սոցիալ-հոգեբանական հիմնադրույրների տեսական վերլուծության արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ տվյալ սննդային վարքաձևի խանգարումները /ՄՎԽ-ները/ արմատանում են վաղ մանկության շրջանում, երբ առաջնային սոցիալական խմբում երեխան ստանում է որոշակի դաստիարակչական դիրքորոշումներ, որոնք պայմանավորում են նրա հետագա վարքը, բնավորությունը, դրդապատճառային,

արժեքային, կամային ոլորտների զարգացումը և կատարվում են համահունչ դերային մոդելների յուրացման հետ:

Այսպիսով, քննարկենք սննդային վարքի և դիրքորոշումների ձևավորումը ընտանեկան դաստիարակության կադասայարում՝ սկսված վաղ մանկության շրջանից: Սննդի ընդունման գործընթացը նորածին երեխայի համար կարող է հանդիսանալ ծնողների նկատմամբ ազդեցությունն ցուցաբերելու միջոց, որի արդյունքում երեխան ի վիճակի է իր սննդային վարքաձևով ազդել, մասնավորապես, ծնողների վարքի վրա՝ առաջացնելով տազնապ, ուրախություն, գերուշադրություն և այլն: Ասել է թե երեխան նորածին հասակից սովորում է կառավարել, կամ տարբեր ձևերով ազդեցության ենթարկել իրեն շրջապատող հարազատներին իր սննդային վարքաձևով [4]: Հետևաբար, տվյալ մեխանիզմը ֆիքսվում է անձի ենթագիտակցական ոլորտում և հետագայում ներընտանեկան կոնֆլիկտային իրադրություններում կարող է դրսևորվել որպես սննդային վարքաձևի խանգարում՝ հիմքում ունենալով ծնողների ուշադրությունը գրավելու և նրանց վարքը կառավարելու միտումը: Այսպես մարդու սննդային վարքը ծննդյան օրից ի վեր կապված է միջանձնային փոխազդեցությունների հետ: Արդյունքում սննդի ընդունման գործընթացն իր տարբեր դրսևորումներում, ինչպիսիք են գանազան տոնակատարությունները, գործնական փոխհարաբերությունների կառուցումն ու ընկերական հավաքույթները դառնում է շփման գործընթացի և անձի սոցիալականացման անբաժան մասնիկը: Ավանդական սննդային վարքաձևերն ու սովորույթները իրենց հերթին արտացոլում են ազգային պատկանելիությունը, մշակութային զարգացման մակարդակը, տարածաշրջանային և կրոնական պատկանելիությունը, ինչպես նաև ընտանեկան դաստիարակությունը: Ինչպես օրինակ, որպես ճարպակալման հոգեբանատոցիալական պատճառների հիմնական դրույթներ Ե. Կրեպսկին տեսնում է հումեոստազի պահպանումը, ռելակսացիան, զգայական հաճույքը, շփումը, ինքնահաստատումը, խմբային ավանդույթների և սովորույթների պահպանումը, պաշտպանվածության զգացումը և էսթետիկական պահանջումների բավարարումը [5]: Որոշ հեղինակներ, ինչպիսիք են Պ. Պլիներն ու Ս. Չայկենը, այս երևույթի հիմքում են տեսնում սննդի ընդունման գործընթացի նկատմամբ անձի կողմից յուրացված սոցիալական դիրքորոշումները, նորմերն ու սպասումները [6]:

Սոցիումի կողմից պարտադրվող գենդերային տարբերություններին երեխան սովորում է հենց ընտանիքում, որտեղ իրականացվում է նրա առաջնային սոցիալականացումը և յուրացվում են գենդերային դերին բնորոշ վարքաձևերը: Գենդերային կարծրատիպերը ենթադրում են հենց այնպիսի վարքային մոդելների յուրացում ինչպիսիք սոցիումի կողմից

ընդունվում են որպես կանաչի, կամ առնական [7]: Դրանք սոցիալական ծրագրավորման ձևեր են, որոնք որոշվում են տվյալ մշակույթին բնորոշ առանձնահատկություններով [8]: Այսօրինակ կարծրատիպերի թվին են դասվում արդի մշակույթին բնորոշ կանաչի արտաքինին վերագրվող պահանջներն ու չափորոշիչները:

Առանձնահատուկ ռիսկային խմբում են գտնվում պերֆեկցիանիստական հակումների տեր երեխաները [9]:

Ինչպես հայտնի է, տվյալ հակումները ձևավորվում են ավտորիտար տիպի ընտանիքներում, որտեղ երեխաների նկատմամբ պահանջները չափազանց բարձր են և ծնողները հակված են ճնշել երեխաների ինքնուրույնությունը, ստեղծագործական և լիդերային /առաջնորդին բնօրոշ/ հակումները, և կամային որակների դրսևորումները:

Կանայք ըստ որոշ հեղինակների կարծիքի հանդիսանում են հասարակության առավել կոնֆորմային մասի ներկայացուցիչներ: Նրանք առավելապես հակված են խմբային ազդեցության ճնշմանը ենթարկվելուն, հետևաբար նրանք նաև առավել հակված են միմյանց կրկնօրինակելուն: Հավանաբար նյարդային անորեքսիայի պարագայում տվյալ խանգարման տարածվածությունը հենց կանանց շրջանում կարելի է հիմնավորել տվյալ երևույթով:

Այսպիսով, բոլոր վերը նշված դրույթները տեղավորվելով սննդային վարքաձևի խանգարումների դաշտ, նշենք, որ եթե ընտանիքում առկա է սննդային վարքաձևի որոշակի կարծրատիպ, որը ենթադրում է սննդի ընդունման գործընթացի նշանակության գերազնահատում, կամ այլ կերպ ասած «սննդային պաշտամունք» և դրան զուգահեռ ներընտանեկան հարաբերությունների սառնություն, ապա անձի մոտ զարգանում է սննդային ազդեցիկ վարքաձև, կամ շատակերություն որպես ներընտանեկան ջերմության կոմպենսատոր մեխանիզմ [10]:

Խեղաթյուրված սննդային վարքաձևերի հիմքում որոշ հեղինակներ տեսնում են ներընտանեկան հարաբերությունների սառնությունը [11]: Իտալացի հոգեթերապևտ Սելվինի-Պալագոլին ընտանեկան թերապիային վերաբերող իր աշխատությունում նշում է, որ նյարդային անորեքսիայով տառապող աղջիկները սերում են մասնավորապես այնպիսի ընտանիքներից, որտեղ իշխում է իդեալիզմը, ծնողներն ավելի պահանջում, քան տալիս են, ինչի արդյունքում ձևավորվում է հերքվելու վախը և թերաթեթության խորագույն բարդույթը, որոնք էլ պրոեկտվում են հասարակության հարթություն և երբ հասարակությունն այդպիսի աղջկա առաջ դնում է ժամանակակից մոդաիկ կարծրատիպերը, ապա տվյալ մեխանիզմների կործանարար ազդեցությունն ուժի մեջ է մտնում՝ հասցնելով դեռահասին մի կողմից նորմերին չհամապատասխանելու դեպքում հասարակության կողմից հերքված լինելու վախին: Մյուս կողմից

ձևավորելով անորեքսիայի համար առաջնային հանդիսացող՝ դիսմորֆաֆորիկ և դիսֆորմամանիակալ երևույթներ [12]: Դրական հույզերի բացակայության, կամ սակավության պարագայում անձը հակված է փնտրել դրանց կոմպենսացնելու հնարավոր տարբերակներ, որոնք տվյալ դեպքում հանդիսանում են սննդային վարքի բուլիմիկ և անորեքսիկ խանգարումները:

Տվյալ խանգարումների կապը դեռևս մանկության տարիներին անձում դաստիարակված պերֆեկցիոնիստական միտումների հետ, անհերքելի է [13-15]:

Մեծական մարմնի պատկերի և Ես-իդեալի անհամադրության առկայությունը նույնպես հանդիսանում է տվյալ խանգարումների առաջացման համար բերրի հող:

Հետևաբար, միանշանակ կարող ենք փաստել, որ տվյալ սննդային վարքի խանգարումների հիմնադրույթը նախնառաջ այն ընտանիքն է, կամ առաջնային սոցիալական խումբը, որում երեխան դաստիարակվում է:

Այսպիսով, բոլոր վերոհիշյալ դրույթների առկայությունը հանգեցնում է եզրակացության, որ քննարկվող երևույթների հիմքում ընկած են սոցիալաձին երևույթներ, հետևաբար, քննարկվող սննդային վարքաձևի խնդիրները մենք դիտարկում ենք որպես սոցիալ-հոգեբանական ազդեցությունների ներքո ի հայտ եկած դիքորոշումների հետևանք: Դրանից ելնելով մենք առաջարկեցինք տվյալ խեղաթյուրումների հանդեպ կիրառել սուգեստիվ լեզվական ռազմավարությունները գրավոր տեքստերում, ինչի արդյունքները կարելի է համարել բավական արդյունավետ: Մեթոդը ներառում է սուգեստիվ լեզվական ռազմավարություններ, որոնք կոչված են փոփոխելու խեղաթյուրված բուլիմիկ, կամ անորեքսիկ վարքաձևերի դրսևորումներ առաջացնող դիքորոշումները: Մեթոդի փորձարկումն իրականացվեց քսան մասնակիցների շրջանում որոնց մոտ թեսթավորումների արդյունքում բացահայտվեց սահմանափակումային զգայագեն և էքստերնալ տիպի սննդային վարքաձևի խեղաթյուրումներ: Վերջինների ցուցանիշները մեթոդի կիրառումից առաջ և հետո արմատապես տարբեր են: Մեթոդի կիրառման արդյունքում փորձարկման մասնակիցների սեփական անձի և մարմնի պատկերի նկատմամբ ինքնագնահատականը, ըստ համապատասխան թեսթավորման արդյունքների, բավական մեծ տարբերություն է ցույց տվել: Փոփոխվել են նաև տագնապայտության մակարդակը և դեպրեսիվ վիճակների հակվածությունը: Արդյունքում առաջարկված մեթոդի կիրառումից հետո փորձարկման մասնակիցների սննդային վարքաձևը փոփոխվել է և սննդային վարքաձևի բացահայտման հարցաշարի արդյունքում նրանց ցուցանիշները մոտեցել են առաջարկվող նորմային: Այստեղ խոսքն իհարկե վերաբերում է զուտ խեղաթյուրված

բուլիմիկ, կամ անորեքսիկ սննդային վարքաձևերին, որոնք այնուամենայնիվ, պաշտոնական չափորոշիչներին չհամապատասխանելու արդյունքում, չեն կարող դառնալ սննդային վարքաձևի նյարդային խանգարումների շարքին, այլ կարող են դիտարկվել միայն որպես սոցիալ-հոգեբանածին խնդիրներ: Սակայն, հարկ է նշել, որ նմանօրինակ խնդիրների առկայությունը խոսում է նման խանգարումների հսկվածության մասին: Հետևաբար, տվյալ մեթոդը տվյալ փուլում չկիրառելու դեպքում, հնարավոր է, որ նման սննդային վարքաձևի դրսևորումները վերաճեն պաշտոնական նյարդային անորեքսիայի, կամ բուլիմիայի, որոնք արդեն արմատապես այլ՝ հոգեթերապևտիկ մեթոդների կիրառման կարիք են զգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. DSM 3, 1980, Diagnostic and Statistical manual of mental disorders, third edition, published by the American Psychiatric Association, 1980.
2. Ажгихина Н. // Журналист. М.: 2005, № 4, с. 75.
3. Агеев В.С. “Психологические и социальные функции полоролевых стереотипов”; В кн. Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского, Изд. Дом “Бахрах-М”, Самара, 2002. с. 291.
4. Вахмистров А. В., Вознесенская Т. Г., Посохов С. И. // Журнал невропатологии и психиатрии им. С. С. Корсакова. 2001, № 12. с.19–24
5. Bruch Н. // The Psychiatric Quarterly, 1961, vol 35, p. 458-481.
6. Креславский Е.С. “Психосоциальные аспекты ожирения” // Социально-гигиенические аспекты ожирения. // Сб. научн. тр.-Л.: Изд. ЛСГМИ, 1981, с. 24-48.
7. Pliner P., Chaiken S. // Journal of Experimental Social Psychology, 1990, vol 26, p. 240-254.
8. Клецина И.С. “Гендерная социализация. Учебное пособие”. // СПб.Изд. “РГПУ им. А.И. Герцена”, 1998, с. 19.
9. Меренков А.В. “Социология стереотипов” // Екатеринбург: Изд. “Урал. Ун-та”, 2001, с. 161.
10. Anderluh, M. B., Tchanturia, K., Rabe-Hesketh, S. // American Journal of Psychiatry, 2003, 160, p. 242–247.
11. Коростелева И.С., Вознесенская Т., Г., Рыльцова Г., А. // Социальная и клиническая психиатрия, 1994, N 1, с. 29-36.
12. McNamara K., Loveman C. // Journal of Clinical Psychology, vol. 46 (4), p. 518-523.
13. Selvini-Palazzoli M., Boscolo L., Cecchin G., Prata G. // Family Process, 1977, vol. 16(4) p. 445-454.

14. Davis C., Claridge G., Fox J. // International Journal of Eating Disorders. 2000, vol. 27, № 1, p. 67–73.
15. Fairburn C., Brownell K. (eds). // "Eating disorders and obesity: a comprehensive handbook". – Guilford press. New York, London, 2003, p. 46-195.
16. Hewitt P., Flett G., Ediger E. // Journal of Abnormal Psychology. 1996, vol. 105, № 2, p. 276–280.

РЕЗЮМЕ

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ДЕТЕРМИНАНТЫ ВОЗНИКНОВЕНИЯ БУЛИМИЧЕСКОГО И АНОРЕКТИЧЕСКОГО ТИПОВ РАССТРОЙСТВ ПИЩЕВОГО ПОВЕДЕНИЯ

А.Л.ШАГИНЯН

Целью работы является анализ социально-психологических детерминантов возникновения булимического и аноректического типов расстройств пищевого поведения. Обсуждаются социально-психологические воздействия, вызывающие данные расстройства или установки, детерминирующие подобное пищевое поведение. В статье также коротко приводятся результаты применения предложенного метода коррекции пищевого поведения посредством изменения социально-детерминирующих установок. Эта цель была достигнута посредством использования суггестивных речевых стратегий в соответствующих тематических метафорически изложенных текстах.

SUMMARY

THE SOCIO-PSYCHOLOGICAL DETERMINANTS OF BULIMIC AND ANOREXIC EATING DISORDERS

H.L.SHAHINYAN

The purpose of the article is the analysis of the socio-psychological determinants of bulimic and anorexic types of eating behavioral disorders. In the article we have discussed the socio-psychological influences and the psychological patterns, which effect the mentioned eating behavioral types. In the article it is also shortly discussed the effectiveness of the suggested method, which has an aim of changing eating behavior itself by changing the socially determined patterns. The following aim was realized by using hypnotic language patterns in metaphorically composed texts.